# Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 60:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**

**1-19 առաջադրանքների հրահանգ –** պատասխանների թերթիկի վրա համապատասխան վանդակում նշեք X նշանը:

1. Ի՞նչ գեղարվեստական առանձնահատկություններով են բնորոշվում Հռոմի Կատակոմբների որմնանկարները:



ա. Վաղ քրիստոնեական շրջանի վարպետները ժխտում էին անտիկ, հունահռոմեական մշակույթին բնորոշ առանձնահատկությունները

բ. Վաղ քրիստոնեական շրջանի վարպետների ստեղծագործությունները վերաբնակեցված (քոչվոր) ժողովուրդների մշակույթի ազդեցության տակ էին

գ. Վաղ քրիստոնեական շրջանի վարպետները անտիկ, հունահռոմեական արվեստի առանձնահատկությունները հարմարեցրել էին նոր արվեստի պահանջներին

դ. Վաղ քրիստոնեական շրջանի վարպետները վերաբնակեցված ժողովուրդների մշակույթին բնորոշ առանձնահատկությունները ընտրությամբ էին գործածում

2. . Ռավեննայի (Իտալիա) Սան Վիտալե բազիլիկան բյուզանդական մշակույթին բնորոշ բազմաթիվ ասպեկտներ է արտացոլում: Թվարկածներից ի՞նչը *չի դրսևորվում* Սան Վիտալե եկեղեցում:





ա. Բյուզանդական արվեստում անտիկ գեղարվեստական ձևերի կիրառումը

բ. Բյուզանդական կայսրության մեծագույն հարստությունը

գ. Հուստինիանոս կայսրի իշխանությունը և նրա դերը կայսրության ընդլայնման գործում

դ. Բյուզանդիայի կողմից Հռոմում մշակած քրիստոնեական արվեստի գեղարվեստական հատկանիշների ժխտումը

**3. Ո՞ր առանձնահատկությունն է արտահայտում Կոնքի Սենտ Ֆոյ տաճարի տիմպանը և Բայոի գոբելենը:**






ա. Մասունքների պաշտամունքն ու ուխտագնացության նշանակությունը

ბ. Արևմտյան Եվրոպայի արվեստում գծային (երկրաչափական) հեռանկարի զարգացման առանձնահատկությունը

გ. Թագավորական հովանավորչության թուլացումը

დ. Պատմելու գեղարվեստական ոճի նշանակությունը

միջնադարյան եվրոպական արվեստում

**4. Ինչի՞ նմուշն է Կորդոբայի Մեծ մզկիթը և Ստամբուլի Այա Սոֆիայի տաճարը:**





ա. Երկիր մուտք գործած նոր կրոնների և մշակույթների համար առկա հուշարձանները նորով փոխարինելու անհրաժեշտությունը

բ. Մեկ մշակույթի կողմից ստեղծված ճարտարապետական կառուցվածքի կիրառումը տարբերվող կրոնական դավանանքի համար

գ. Իսլամի կողմից կառույցների դասական նմուշների ժխտումը

դ. Բյուզանդիայի կողմից իսլամական գեղարվեստական նմուշների վերամշակումը և դրանց կիրառումը քրիստոնեության տեսանկյունից

**5. Թվարկածներից ո՞ր նկարագրությունը և/կամ առանձնահատկությունը *<u>չի համապատասխանում</u>* Էնգրի «Մեծ օդալիսկա» (1814) և Մանեի «Օլիմպիա» կտավներին:**





ա. Պառկած նյու

բ. Լույսի և ստվերի հակադրության կիրառում

գ. Վերածննդի ազդեցությամբ ստեղծված ծալազարդում

դ. Կոմպոզիցիաներում նկարչության ժամանակակից եվրոպական կենցաղային մանրիկների հավելումը

**6. Ո՞ր ինստիտուցիաների հետ կապն են յուրովի արտահայտում Էնգրի և Մանեի ներկայացված կտավները, ինչը ազդեցություն էր գործում Փարիզի գեղարվեստական աշխարհի վրա:**





ա. Եկեղեցի և արիստոկրատիա

բ. Ակադեմիաներ և սրահներ

գ. Թանգարաններ և արվեստի հանրային ծրագրեր

դ. Առևտրային պասաժներ և հանրային ժողովրդական պատկերասրահներ

**7. Թվարկածներից ո՞ր բնութագիրը *<u>չի համապատասխանում</u>* Գուստավ Կուրբեի «Քար ջարդողները» նկարին:**




ա. Ստեղծագործության մեջ դրսևորված ուրբանիզացիայի արդյունքները

բ. Կոպիտ, անավարտ գրելաոճ հակադրված գեղանկարչության ակադեմիական ոճին

գ. Կոմպոզիցիա, ուր նկարի ամբողջ մակերևույթին գերակայում են կերպարների պատկերները

դ. «Հին վարպետների» գեղարվեստական ոճի միջոցով նկարիչները ստեղծում են սոցիալական ցածր խավի մարդկանց գեղարվեստական կերպարներ

**8.Թվարկածներից ո՞ր նոր տեխնոլոգիան *<u>ազդեցություն չի գործել</u>* իմպրեսիոնիզմի՝ որպես գեղարվեստական ուղղության ձևավորման վրա:**

ա. Հեռադիտակի և աստղադիտակի զանգվածային արտադրությունը

բ. Երկաթուղու լայնորեն զարգանալը

գ. Լուսանկարչությունը

դ.Ներկերի զանգվածային արտադրությունը

9. Թվարկածներից ի՞նչ *չի արտահայտում* Դոմիեի «Լուսանկարչությունն արվեստի մակարդակի բարձրացրած Նադարը» նկարը և Մոնեի «Սեն-Լազարի կայարանը» կտավը:







ա. Քաղաքի և քաղաքաշինական կյանքի նշանակությունը

բ. Հեռանկարի օրենքների ժխտումը

գ. Նոր տեխնոլոգիաների նշանակությունը առօրյա կյանքում

դ. Յուրահատուկ պահերը ամրագրելու նկատմամբ մեծ հետաքրքրությունը

**10. Թվարկածներից *ամենից շատ ի՞նչով  է տարբերվում* Վան Գոգի  «Աստղալից գիշերը» Սեզանի «Սենտ Վիկտուարի (Սուրբ Վիկտուարի) լեռը» կտավից»:**





ա. Ռեալիստական  արվեստին բնորոշ գեղարվեստական հատկանիշներով

բ. Երկու նկարում էլ կարևորություն է տրվում տեղական և մթնոլորտային փոփոխությունների ճշգրիտ արտացոլմանը

գ. Հակադրությամբ, որը ստեղծված է կոնտրաստային և մասամբ կոնտրաստային գույների միջոցով

դ. Հեղինակներից մեկի մոտ կարևորություն է տրվում էքսպրեսիվ արտահայտչականությանը, իսկ մյուսի մոտ՝ բնության գեղանկարչական   ընկալմանը

**11. Թվարկածներից ո՞ր միջոցը *չի ծառայում* գեղարվեստական կերպարի էքսպրեսիվ բնույթի ստեղծմանը կերպարվեստի տարբեր ճյուղերի նմուշներում՝ Ռոդենի «Կալեի քաղաքացիները» և Մունկի «Ճիչը»:**





ա. Ժեստերի և դեմքի պատկերման չափազանցումը

բ. Ստեղծագործության մակերևույթը, որի վրա կարծես կարդացվում է վարպետների ձեռքի հետքը

գ. Հստակ դրսևորված ինքնակենսագրական ակնարկները

դ. Երկարացված, անկյունային ձևերը

**12. Ինչո՞վ է պայմանավորված տեմպերա ներկերի հետ համեմատ յուղաներկերի ավելի լայն զարգացումը Վերածննդի դարաշրջանում:**

ա. Պակաս թափանցիկ է

ՠ. Ավելի արագ է չորանում

ց. Բավականաչափ էժան է

ՙ. Բավականին հարմար է գեղարվեստական մշակման ժամանակ

**13. Ո՞ր հիմնական առանձնահատկությունների վրա պետք է սևեռենք ուշադրությունը Վերածննդի դարաշրջանում ստեղծած Ռուչելլաի պալատի և Պացցի կապելլայի ճարտարապետության մասին դատողություններ անելիս:**





ա. Երկու կառույցն էլ կառուցված էին ոչ ազվնատոհմ ընտանիքների համար

Ճ. Երկու կառույցում էլ հստակ դրսևորվում է անտիկ Հռոմի ճարտարապետության անմիջական ազդեցությունը

ց. Երկու կառույցում էլ կիրառված են կիսաշրջան կամարներ

ҩ. Երկու կառույցում էլ կիրառված է առնվազն 3 տեսակի օրդեր

**14. Թվարկածներից ի՞նչը կարող է համարվել շեղում դասական գաղափարներից Միքելանջելոյի կողմից Միքստինյան կապելլայի համար ստեղծված որմնանկարներում:**

ա. Ճարտարապետական կառուցվածքի և նկարչության փոխկապակցությունը

բ. Դրամատիզմի և արտահայտչականության (էքսպրեսիայի ) վրա առավել մեծ ուշադրություն սևեռելը քան ներդաշնակության և կարգականոնի վրա

գ. Գաղափար և կարծիք արտահայտելու նպատակով ժեստերի ոճավորումը

դ. Կոմպոզիցիաներում մերկ կերպարների առատությունը

**15. Ուշադիր ուսումնասիրեք Աթենի Սիոնի որմնանկարի դետալը: Ո՞ր գեղարվեստական առանձնահատկությունը *<u>բնորոշ չէ</u>* վրացական որմնանկարչության ներկայացված նմուշին:**



ա. Որմնանկարի մոնումենտալիզմ և տոնական բնույթ

բ. Անատոմիայի գիտելիքների հիման վրա ստեղծված պլաստիկ կերպարներ

գ. Չափազանցված և պաճուճազարդ, ինչպես նաև ոճավորված պատկեր

դ. Ճարտարապետական և բնանկարի տարրերի պարզ, լակոնիկ ձևեր

**16. Ստորև ներկայացված ճարտարապետական հատակագծերը վրացական քրիստոնեական տաճարների տարբեր տեսակի նմուշներ են ներկայացնում: Դրանցից ո՞րն է ներգծված խաչի տիպի կառույց:**

ა.



ბ.



გ.



დ.



**17. Ի՞նչ հատկանիշով է առանձնանում վրաց քրիստոնեական ճարտարապետությունը «անցումային» դարաշրջանում (VII – X դարերում):**

ա. Ճարտարապետական տիպերի և թեմաների բազմազանությամբ

բ. Տաճարների կենտրոնակազմ հորինվածքով

գ. Տաճարների բազմաբսիդությամբ

ԴՃ.Ժայռի մեջ փորագրած ճարտարապետության տեխնոլոգիական մոտեցումների մշակմամբ

**18. Ի՞նչ գեղարվեստական յուրահատկությամբ է առանձնանում Մցխեթայի Ջվարիի արևելյան ճակատի ներկայացված ռելիեֆը:**



ա. Ռելիեֆին բնորոշ ծավալուն ձևերը և ընդհանուր առմամբ գեղարվեստական բնույթը վկայում են Հելլենիստական մշակույթի ավանդույթների հետ դեռևս պահպանված կապի մասին

Յ. Վաղ քրիստոնեական շրջանի վարպետները հերքեցին Հելլենիստական մշակույթին բնորոշ առանձնահատկությունները

գ. Պատկերն առանձնանում է հարթա-գրաֆիկական ոճով և նկարի զարդանախշային բնույթով

դ. Ռելիեֆի վրա նկատվում են հարթա-դեկորատիվ ոճի նշաններ, ինչը մատնանշում է արևելյան գեղարվեստական ավանդույթները

**19. Ի՞նչ է ռոտոնդան:**

ա. Երկարացված հատակագծով ուղղանկյուն շինություն, որը սյուների միջոցով բաժանված է երեք կամ հինգ նավերի:

բ. Խաչաձև հատակագծով շինություն, որի բոլոր չորս կողմերը ավարտվում են աբսիդներով

գ. Բոլորակ հատակագծով շինություն

դ. Ուղղանկյուն հատակագծով շինություն, որը չորս կողմից շրջափակված է սյուներով

## 20-25. առաջադրանք: «Ճշմարիտ է - Սխալ է»

**Առաջադրանքի հրահանգ**–ուշադիր ծանոթացեք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշեք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրեք ճիշտ ձևակերպումը:

**Դիտողություն.** Եթե կարծում եք, որ ձևակերպումը սխալ է և գտնում եք, որ վկայության մեջ տրված պարզաբանումը ինքնին ճիշտ է ձևավորված, թեև չի ներկայացնում տրված տերմինի և/կամ բառի բացատրությունը, ապա անփոփոխ թողեք պարզաբանումը և այդ նույն պարզաբանման համար փնտրեք և համապատասխանեցրեք համարժեք տերմին և/կամ բառ:

**Նմուշ.**



20. Տարբեր ոճերի գեղարվեստական տարրերի և  մոտիվների  համադրությունը  ճարտարապետության մեջ կոչվում է էկլեկտիզմ:

21. Դեկորատիվ կերպով ձևավորված քարե պատնեշը , որը  խորանը  բաժանում է եկեղեցու մյուս տարածքից կոչվում է խորանի առջև խոյացող խաչ:

22. Հին հունական քաղաքի բարձրադիր վայրում  տեղակայված ամրացված հատվածը, որտեղ հասարակական և պաշտամունքային շինություններ էին կառուցած կոչվում է  Ագորա:

23. Գեղարվեստական միջոց, որի շնորհիվ տարբեր կարծիքներն ու գաղափարները հնարավոր է արտահայտել անուղղակիորեն, խորհրդանիշների միջոցով, ինչպես նաև երկնային մարմինների կամ էակների մարմնավորումը կոնկրետ կերպարներում կոչվում է ալեգորիա (այլաբանություն):

24. Կերպարների կամ սյուժետային տեսարանների պատկերման (մեծ մասամբ եկեղեցական գեղանկարչության մեջ) խիստ սահմանված համակարգը կերպարվեստում կոչվում է  սրբապատկերագրություն:

25. Բյուզանդական տաճարի ճակատը, այնպես ինչպես  և ինտերիերը (ներսակողմը) հագեցած է  հարուստ զարդարանքով:

26. Գործնական աշխատանք

Հրահանգ – ստեղծեք նատյուրմորտ կուբիստական ոճում, կոմպոզիցիոն սկզբունքների համապատասխան պատկերը զետեղեք նկարի հարթության վրա, կիրառեք գրադացիա (աստիճանավորում), տոնային և լոկալ բծեր:

**27-31. Ժամանակագրության որոշում:**

**Առաջադրանքի հրահանգ –** դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) կերպարվեստի նմուշները ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառեք  պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Նկատի ունեցեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

27. Դասավորեք քանդակների  նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



3.



4.



**28. Դասավորեք նկարիչների ինքնապատկերները ՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:**

1.



2.



3.



4.



**29. Դասավորեք վրացական մոնումենտալ նկարչության նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:**

1.



2.



3.



4.



30. Դասավորեք ճարտարապետական նմուշները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



4.



5.



**31-33 առաջադրանքներ: Համապատասխանության որոշում**

**31. Առաջադրանքի հրահանգ -** A աղյուսակում տրված տաճարի հատակագծերը համապատասխանեցրեք B աղյուսակում ներկայացված ճարտարապետական տիպերի թվարկացանկին: Նկատառեք, որ մեկ բնութագրիչին համապատասխանում է միայն մեկ ուղղություն և/կամ դարաշրջան:

A 1.



2.



3.



B ա. Քառակոնք, Յ. Երակոնք, Գ. Բազիլիկ, Ւ. Բազմաբսիդ, Ե. Կենտրոնակազմ-գմբեթավոր

**32. Առաջադրանքի հրահանգ -** A աղյուսակում տրված գեղարվեստական տեխնիկաները համապատասխանեցրեք B աղյուսակում ներկայացված նկարներին: Նկատառեք, որ մեկ տեխնիկային համապատասխանում է միայն մեկ նկար:

**A** 1. Էնկաուստիկա (մոմանկարչություն) 2. Խճանկար 3. Որմնանկար

**B** ა.



ბ.



გ.



დ.



ე.



**33. Առաջադրանքի հրահանգ –** A սյունակում տրված գեղարվեստաոճական բնութագրիչների թվարկացանկին համապատասխանեցրեք B սյունակում տրված ուղղություն/դարաշրջանը: Նկատառեք, որ մեկ բնութագրիչին համապատասխանում է միայն մեկ ուղղություն և/կամ դարաշրջան:

| **Գեղարվեստաոճական բնութագրիչներ** | **Ուղղություն/դարաշրջան** |
|---|---|
| A.<br>1. Ուղղություն արվեստում, որի ներկայացուցիչները ձգտում են արտացոլել ***ոչ թե*** առկա իրականությունը, այլ հույզերի սուբյեկտիվ աշխարհը: Հուզական էֆեկտին հասնում են ձևերի չափազանցմամբ<br><br>2. XIX դարավերջի և XX դարի առաջին տասնամյակներում հանրահայտ դեկորատիվ ոճ: Այն բնութագրվում էր ալիքավոր գծերով և ձևերով, որոնց հիմքում ընկած են բուսական ձևերը<br><br>3. Վաղ XX դարի գեղարվեստական ուղղություն, որին բնորոշ էր վառ գույների ոչբնական կերպով օգտագործումը | B.<br>ա. Ֆովիզմ<br><br>բ. Մոդեռն<br><br>գ. Վերածնունդ (Ռենեսանս)<br><br>դ. Էքսպրեսիոնիզմ<br><br>ե. Իմպրեսիոնիզմ |

34. Արվեստի որոշ նմուշներ  մտածված են որպես դիցաբանական սյուժեի մեկնաբանություն (ինտերպրետացիա): Ներկայացված  նկարներից ընտրեք արվեստի նմուշներից մեկը և կապակցեք այն  կոնկրետ սյուժեի հետ:  Վերլուծեք ստեղծագործությունը և որոշեք.

1.



2.



**3.**



**4.**



**ա.** Արտահայտչական և կոնտեքստուալ առանձնահատկությունները, որոնք բացահայտում են այս ստեղծագործության կապը ձեր կողմից նշված սյուժեի հետ:

**Յ.** Ո՞ր գեղարվեստական եղանակների միջոցով է հեղինակն արտահայտում ստեղծագործության գաղափարը:

**35. Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծությունը**

Իմաստավորեք, վերլուծեք և գնահատեք ստորև ներկայացված արվեստի նմուշը



**Առաջադրանքը կատարեք ըստ ցուցումների.**

**35.1** Նկարագրեք և բնութագրեք կոմպոզիցիան, ո՞ր ժանրին է պատկանում ներկայացված կոմպոզիցիան, նյութի և տեխնիկայի հիման վրա որոշեք թե կերպարվեստի ո՞ր ճյուղի նմուշն է ներկայացված:

**35.2** Վերլուծեք և հակիրճ ձևակերպեք, թե կերպարվեստի ի՞նչ միջոցներ ու մեթոդներ է կիրառում հեղինակը նկարի վրա գեղարվեստական կերպարի բնույթ ստեղծելու համար:



**35.3** Գեղարվեստառճական բնութագրիչների հիման վրա սահմանեք ստեղծագործության ստեղծման ժամանակը, որոշեք, թե ո՞ր երկրի արվեստի նմուշն է ներկայացված, նշեք հեղինակի անունը:

**35.4** Գնահատեք աշխատանքը՝ արտահայտեք Ձեր վերաբերմունքը, քննարկեք և հիմնավորեք Ձեր կարծիքը:

**35.5** Դատողություններ արեք ազդեցությունների շուրջ, քննարկեք ստեղծագործությունը պատմամշակութային և այլ համատեքստում: